# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

գ. Շիրակամուտ

N°—Ե -03/205

«24» 09. 2018թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ.ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մարգարյան

Ձեզ ենք ներկայացնում Շիրակամուտ համայնքի ավագանու թիվ 31-Ա , թիվ 32-Ն և թիվ 33-Ա որոշումները :

Առդիր 4 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,, 18" սեպտեմբերի 2018 թվականի N31-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18 -Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Շիրակամուտ համայնքի ավագանու 2018թ. սեպտեմբերի 18-ի հերթական նիստի օրակարգը

ՕՐԱԿԱՐԳ

1. Շիրակամուտ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 33-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
2. Սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն և ուսման վարձ հատկացնելու մասին:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/5 / | դեմ /0 / | ձեռնպահ/ 0 / |
|---|---|---|---|
| Ա.Կյուրեղյան | | | |
| Հ.Նալբանդյան | | | |
| Հ.Մազմանյան | | | |
| Ն.Նասլյան | | | |
| | | | |

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

,, 18 '' սեպտեմբերի 2018 թվականի N32 -Ն

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ 21-Ի ԹԻՎ33 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, 33-րդ հոդվածի 4-րդ մասով, << Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

Շիրակամուտ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 21-ի << Շիրակամուտ համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 33-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը .

1. Բյուջեի 09/2/2 դասակարգման 4269 հոդվածից 20,0 /քսան/հազար դրամ տեղափոխել 09/2/2 դասակարգման 4637 հոդված՝ Շիրակամուտի միջնակարգ դպրոցի տարրական դասարանների աշակերտների սննդի հարցում մասնակի օժանդակելու համար

2. Բյուջեի տողերը համարել փոփոխված սույն որոշման 1-ին կետից բխող փոփոխություններին համապատասխան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/4 / | դեմ /0 / | ձեռնպահ/ 0 / |
|---|---|---|---|
| Ա.Կյուրեղյան | | | |
| Հ.Նալբանդյան | | | |
| Հ.Մազմանյան | | | |
| Ն.Նասլյան | | | |
| | | | |

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,,18''-ը սեպտեմբերի 2018թվականի N33 -Ա

### ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ և ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 16-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով Շիրակամուտ համայնքի բնակիչների դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

1.. Շիրակամուտ համայնքի 2018թ. բյուջեի 10.7.1 դասակարգման 4729 հոդվածից Քրիստինե Սամվելի Կուրղինյանին հատկացնել դրամական օգնություն՝ 30000,0/երեսուն հազար/դրամ, համաձայն հավելվածի:

2. Շիրակամուտ համայնքի բյուջեի 09.4.1 դասակարգման 4729 հոդվածից՝ ,,Բարձրագույն մասնագիտական կրթություն'', 2018-2019թ.թ. ուս. տարվա 1-ին կիսամյակի ուսման վարձ փոխանցել ,,Երևանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան '' 50000/հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ Գալինա Արմենի Սերոբյանի համար և ,, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղ'' 50000/հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ Մուշեղ Հրաչի Նալբանդյանի համար, /համաձայն հավելվածի/:

3.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակիչներին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/3 / | դեմ /0 / | ձեռնպահ/ 0 / |
|---|---|---|---|
| Ա.Կյուրեղյան | | | |
| Ն.Նասլյան | | | |
| Հ.Մազմանյան | | | |
| | | | |
| | | | |

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի ավագանու
2018 թվականի սեպտեմբերի 18--ի N 33-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Կուրղինյան Քրիստինե Սամվելի —երեսուն հազար դրամ, / սոց. օգնություն/.

2. Նալբանդյան Մուշեղ Հրաչի - հիսուն հազար դրամ, /ուսման վարձ/.

3. Սերոբյան Գալինա Արմենի - հիսուն հազար դրամ, /ուսման վարձ/.

ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ.ԵՐԱՆՈՍՅԱՆ